ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է «ԱՏՈՄԱՅԻՆ ՆՈՐ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ՓԲԸ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2024թ. օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետությունում նոր ատոմային էներգաբլոկի (էներգաբլոկների) կառուցման ծրագրի կառավարման նպատակով «Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» №1198-Ն որոշման համաձայն նախատեսվում է ստեղծել «Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» ՓԲԸ (այսուհետ՝ ընկերություն):

Ընկերության գործադիր մարմնի ձևավորման գործընթացն իրականացնելու նպատակով հայտարարվում է Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու համար համապատասխան մասնագետի ներգրավում՝ մինչև Ընկերության գլխավոր տնօրենի թափուր պաշտոնում մրցույթի արդյունքում նշանակումը:

Սկզբնական փուլում նախատեսվում է ձևավորել ընկերության գործադիր մարմին, ապահովել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընկերության պետական գրանցումը, ինչպես նաև Ընկերության կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացումը:

Ընկերության գործառույթները միտված են լինելու Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հետ կապված համապատասխան կադրերով համալրմանը և վերջիններիս կարողությունների զարգացմանը, որպեսզի մասնագիտական եզրակացություն ներկայացվի ՀՀ կառավարությանը նոր միջուկային էներգաբլոկի կառուցման տեխնոլոգիայի ընտրության վերաբերյալ:

Ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնում համապատասխան մասնագետի ներգրավման համար պահանջվում է՝

1. Էներգետիկայի բնագավառի բարձրագույն կրթություն
2. ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա կամ առնվազն հինգ տարվա էներգետիկայի բնագավառի աշխատանքային ստաժ
3. Իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն
4. կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն.

Տնօրենների ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.
- համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն.
- ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.
- ռուսերենի ազատ տիրապետում և անգլերենի կամ գերմաներենի կամ ֆրանսերենի իմացություն:

«Ատոմային նոր էներգաբլոկի» ՓԲԸ ստեղծելու համար գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնում համապատասխան մասնագետի ներգրավման համար հարցազրույցը կանցկացվի **2025 թվականի**

դեկտեմբերի 18-ին, ժամը 11:00, Նախարարության շենքում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ՝ դահլիճ):

Ներգրավմանը մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է անձամբ Նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում).
2. մեկ լուսանկար 3X4 չափի.
3. քաղվածք աշխատանքային գրքույկից կամ աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (հրաման, տեղեկանք).
4. ինքնակենսագրություն.
5. անձնագիր և/ կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք),
6. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ,
7. արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական.
8. կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված).
9. տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
10. հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում).
11. բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Քաղաքացին ներկայացվող բնօրինակ փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև դրանց պատճենները, որոնք պատճենների հետ համեմատվելուց հետո վերադարձվում են քաղաքացուն:

Ներգրավմանը մասնակցելու համար դիմումներն ընդունվում են աշխատանքային օրերին՝ 2025 թվականի դեկտեմբերի 11-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 17-ը ներառյալ՝ ժամը 9.30-ից 13.00-ը:

Ներգրավմանը մասնակցել ցանկացող քաղաքացիները հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամարներ՝ 010-511-355, 010-511-316, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):